ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ.
Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ.
Ռուսաստան 3 ռուբլի. վեցամսեան 2 ռուբլի.
Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք:
Հասցէ Téhéran Rédaction ASTCH-AREVELIAN

Թիւ 4
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 24 Յունվար
1896
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերի:
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով. իւրաքանչիւր բառն 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օտարների ներկայութիւնը.---- ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայի օտարամոլութիւնը. Թէհրանի Րաֆֆի ընկերութիւնը և նրա թշնամիները. Թափառական դէրվիշներ. Նամակներ Նոր-Ջուղայից. Ներքին լուրեր.----ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.--- Այլք և այլք. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՀայկական գրականութեան ոսկեդարը 500 թւականին.

ՕՏԱՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Այն օրուանից որ աչք ենք բացել մեր պարսկահայ գաղթականութիւնը տեսել ենք՝ դժբաղդաբար այն յոռի նախապաշարմունքին ենթարկուած, որ մինչեւ որեւէ օտարականի ներկայութիւնն եւ միջամտութիւնը չլինի, տեղումս ոչ մի ազգային հաստատութիւն կամ՝ գործ չի կարող հաստատուիլ, եւ եթէ էլ լինի անպատճառ յաջողութիւն չպիտի ունենայ. զոր օրինակ եթէ ցանկանում ենք Պարսկաստանի որեւէ հայաբնակ քաղաքում, մանաւանդ Թէհրանում վարժարան ունենալ, այդ պիտի հաստատի մեզ համար օտարականի եւ օտարազգիի ձեռքը. եւ եթէ դարերից յետոյ, զգանք ընթերցարանների անհրաժեշտ պէտք, այդ պիտի լցնէ օտարականը, անծանօթը, շահախնդիրը եւ վերջապէս ձեռնածու ազգասէրը...կամ եթէ ցանկանում ենք որ եւէ թերթ ունենալ, դորա էլ հոգի, կեանք եւ միանգամայն գոյութիւնը պիտի տանք վարձկան օտարականների ձեռքը... ուսուցիչ է պէտք, անպատճառ պէտք է դիմենք օտար ազգիներին եւ օտարականներին... ինչու, ինչու այս ամենը. որովհետեւ այդ անիծած նախապաշարումը, սկըզբից (երբ ազգայինք, բացի արուեստ ուրիշ ոչինչ չէին ճանաչում) արմատացել է մերայինների մէջ, թէ մենք պարսկաստանցիքս ոչինչ անելու ընդունակ ենք. եւ թէ այդպէս ծանր եւ կարեւոր գործերի հաստատութեան եւ կառավարութեան համար պէտք են օտար քաղաքացիք եւ օտարազգիներ, վերջապէս արտասահմանից եկող որ եւէ հայ... Այո ճշմարիտ էր եւ բանական, այդ առարկութիւնը միայն քառորդ դար առաջ, ուր մեր պարսկահայերը բացի ոսկերչութիւն, հիւսնութիւն եւ վերջապէս օղեվաճառութիւն էլ մի բան չէին ճանաչում, ուր նըրանց բոլորին անծանօթ էր գրիչ եւ նրա զօրութիւնը, եւ որոնք, իրենց տարագրուած Սիրելիներին երկու տող գրելու համար հարկաւորում էին պաղատանքով դիմել մի որեւէ խալիֆայի, տիրացուի. այդպիսիներին ոչ կարող ենք մեղադրել եւ ոչ էլ պահանջել այն՝ որ ներկայ վառ եւ եռանդուն լուսաւոր երիտասարդութիւնը կարող է անել. բայց այսօր, այս ժամի՞ս, ինչու պիտի դեռ այդ նողկալի նախապաշարմունքի ժանգոտած շղթայով կաշկանդուած լինի մեր արդի զարգացած եւ լուսաւոր տարրը մանաւանդ մշակուած երիտասարդութիւնը. միթէ այսքան ժամանակ չկարողացա՞նք հասկանալ, որ օտարական եւ օտարազգիների ներկայութիւնը բացի անօգուտ լինելէ շատ տեսակէտներով էլ աղէտաբեր է եւ վնասակար մեր գործերին... դեռ չկարողացա՞նք ճանաչել նոցա շահախնդիր նպատակները. չհասկացանք որ օտար

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՍԿԵԴԱՐԸ 500 ԹՒԱԿԱՆԻՆ

Քրիստոնէութիւնն արդէն հաստատուել էր Հայաստանում, սակայն նորա ամրապինդ ծաւալմանը պակասում էր ուրիշ մի շատ կարեւոր միջոց. ազգային լեզուի դպրութիւնը: Հարկաւոր էր մայրենի լեզուով թարգմանել Ս. Գիրքը հարկաւոր էր, որ հայ մարդը անձամբ կարդար նորան, այն լեզուով որ ինքն էր խօսում. այն ժամանակ նա աւելի լաւ ըմբռնելով քրիստոնէական կրօնի վեհ մտքերը, աւելի ջերմեռանդ, աւելի հաստատ հաւատք կտածէր նորա վրայով:

Թէեւ յունարէնով ասորերէնով կատարւում էր հայ երկրում նորա եկեղեցական պաշտամունքը բայց որովհետեւ օտար լեզուով կարդալ ժողովրդի մի փոքրաթիւ մասը միայն գիտէր, ուստի այդ մեծապէս արգելք էր դառնում քրիստոնէութեան զարգացմանը:

Ահա այդ ժամանակ, Աստուած այցելելով իր ժողովրդին պարգեւեց նորան մի կարող անձ, որ 406 թւին իր անձանձիր աղօթքով եւ աշխատութեամբ Հայաստանի հովապետ Մեծն Սահակ Պարթեւ լուսաւորչի Ն-րդ. շառաւիղի, եւ Վռամշապուհ արքայի աջակցութեամբ գտաւ հայոց գիրը, բաց արեց հայ ազգի փակ լեզուն տալով նրան հարազատ լեզուի դպրութիւնը: Լուսաւորիչը տուաւ հային քրիստոնէութեան լոյսը, իսկ այդ լոյսը ծաւալեց նորա գիրը հնարելով Մեսրոպը մականուանեալ վարդապետի ձեռամբ.

Մեսրոպը Մաշտոցը ծնեցաւ 355 թւին, Տարօնի Հացեկ գիւղում: Նորա հայրը մի ազնուական էր Վարդան անունով: Մանկութիւնից սրամիտ եւ ընդունակ լինելով ուսման մէջ տեսնողները զարմանում էին նորա ծիրքի վրայ եւ ամենքը գուշակում էին որ մեծ մարդ կդառնայ: Եւ իրօք, նա արագ զարգացաւ, սովորեց Յունարէն եւ դարձաւ քաջ թարգմանիչ այդ լեզուի:

Իսկ Սահակ Պարթեւը, որ 354-ին էր ծնել եւ Մեծն Ներսէսի որդին էր, իր կրթութիւնն ստացաւ Կեսարիայում ու Բիւզանդիոնում:

Մեծն Ներսէսի մահուանից յետոյ, գերազանց հօր արժանաւոր որդին բազմեց կաթողիկոսական գահի վրայ ուր իւր ունեցած ժողովրդականութեամբ, ոչ միայն ազգին հայրն ու դաստիարակը դարձաւ այլ եւ նրա սրտի մտքի վերայ իշխող թագաւորը:

Մեսրոպը շնորհիւ իւր ուսման մէջ ունեցած զարմանալի յաջողակութեան նախ Մեծն Ներսէսի մօտ ընդունեցաւ իբրեւ Հայրապետական քարտուղար. ապա ստանձնեց արքայական դիւանապետութեան պաշտօնը, իսկ դորանից յետոյ զինուորական ասպարէզ մտաւ: Նա հարուստ էր թէ զէնքի եւ թէ գրչի մէջ, քաջ եւ արի թէ հոգւոր եւ թէ երկրաւոր նահատակութեանց հանդէսներում: Բայց զինուորի պատմուճանն ու սուրը չէր վիճակել նորան, նորա կոչումն այլ էր, նա ձգտում էր գործել՝ ժողովրդի մէջ, գործել նորա բարօրութեան համար: ծնուած լինելով Տարօնի նման եկեղեցաշատ վայրում, որտեղ կատարուել են այնքան սխրալի եղելութիւններ, Մեսրոպի գլխում այլ մտքեր էին ծնում. Նա կամենում էր հետեւել մօտիկ անցեալում գործող հայ նշանաւոր գործիչներին, ցանկանում էր առաջ տանել նրանց սկսած ս. գործը, հնարելով մայրենի լեզուի գիրը: Փայփայած իղձը՝ նորա մտածութեանց քաղցր առարկան էր, նորա միակ ձըգտումը, որի գործողութեան համար, նա պատրաստ էր կրել ամենատեսակ նեղութիւններ, միայն թէ օր առաջ իրականացած տեսնէր նորան, օր առաջ տեսնէր հայ եղբօրը իւր լեզուով կարդալիս:

Մեծն Սահակ Պարթեւը, նորա սիրելի բարեկամը՝ իւր կենդանի օրինակով աւելի էր խրախուսում նորան. եւ նա թողեց զէնքը. հրաժեշտ տուաւ արքունիքին եւ միմիայն գրիչը իրան անբաժան ընկեր ընտրելով՝ առանձնացաւ Տարօնի մենաստանը ուր ժողովելով իր շուրջը իւր նման սրբասէր աշակերտներ, նորանց հետ խմբովին սլանում էր Հայ երկրի զանազան գաւառները. ուսուցանում էր Աւետարանը, ջնջում էր հեթանոսութիւնից մնացած սովորութեանց հետքերը ժողովրդի սրտից. եւ որպէս մի նոր լուսաւորիչ. օրինակ էր հանդիսանում իւր սրբակրօն եւ աղօթասէր կեանքով: Մինչդեռ Մաշտոցը իւր նպատակով էր զբաղուած՝ հայրապետական գահի վերայ Մեծն Սահակ հրաշքներ էր գործում: Նա իւր բարձր դիրքում ուսում, փիլիսոփայութեանց, մտաւոր եւ բարոյական կրթութեանց ջահն ու մեկենաս հանդիսանալով, պայծառացնում էր եկեղեցին, յորդորում էր իւր հօտի անդամներին անտարբեր սիրով եկեղեցին սիրել, հայրենիքն սիրել, եղբար սիրել:

(Կը շարունակուի)

բական վարձկան գործողները. ուրքի տակ առնելով մեր հասարակային շահ եւ պատիւը աշխատում են բարձրանալ իրենց փառք եւ համբաւի զագաթին... վերջապէս օտարը միշտ օտար է իր բոլոր գաղափարներով, մտքերով եւ ձգտումներով ու նպատակներով, եթէ լինի նա երկնքից իջած. նա եթէ ցաւ է յայտնում դա իր շահի համար է, որովհետեւ նա՝ մեր վէրքերին եւ վիճակին անծանօթ լինելէ զատ, իւր նպատակի յաջողութիւնը մեր ցաւերի եւ անկեալ վիճակի մէջ է փնտռում... Ցաւի դառնութիւնը կարող է զգալ միայն ցաւակիրը, եւ ոչ թէ ականատես օտարականը...

Մենք ենք ցաւակիրը եւ մենք էլ պիտի լինինք մեզ դարմանողը. մեր պարսկահայերիս աննախանձելի եւ անկեալ վիճակի փոփոխութիւն տուողը պիտի լինի մեր երիտասարդութիւնը, եթէ նա՝ աչք զոցէ քստմնելի օտարամոլութեան. եւ ստէպ (անճնական հաշիւների պատճառով) ազգասիրական անունով ծնգաչոք չքծնի օտարազգի օտարականների առաջ ինչպէս անում են մեր Թէհրանցի երիտասարդներից շատերը այո շատ հեշտութիւնով կարող է նա՝ օտարականների եւ ինքնակոչ՝ վարձկան ազգասէրների յափշտակող ճիրաններից ազատել եւ կառավարել մեր բոլոր կիսակատար եւ խանգարուած վիճակի մէջ մնացած ազգային գործերը, դպրոցները, ընթերցարանները եւ այլն, եթէ միացնէ բաժանուած ուժերը եւ խորտակէ տգէտ հայերի դարձած նախ[illegible] շարժումների կաշկանդող այ[illegible] թէ մենք՝ պարսկահայեր[illegible] տարների օգնութեանը [illegible] ընդունակ ենք. այո [illegible] մեր նախորդներ[illegible] թանձր խաւա[illegible]ած էին լոյսից [illegible]ից օգնութեան [illegible] [illegible]այն չէ՞ որ մ[illegible] [illegible]արդութիւնը հ[illegible] [illegible]յրերին ծնուել [illegible]ալ է մտաւոր ա[illegible] [illegible] ուստի ինչու թողնել [illegible] օտարներին, ինչո՞ւ իրա[illegible] նոցա՝ մտնել մեր ներքին [illegible] մէջ եւ [illegible] ծիծաղել մեր [illegible] տակ. կրկնում եմ ինչ որ [illegible]րն անցի, թող մեր երիտասարդութիւնը միանայ եւ միակամ վարի մեր ազգային բոլոր գործերը եւ պիտի տեսնէ թէ ինչպէս ինքնակոչ եւ օտարական ազգային գործողներ եւ օտարազգի բարերարները պիտի անյայտանան ասպարէզից...

Սուքրատ Մ. Գելոֆեանց.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԻ ՕՏԱՐԱՄՈԼՈՒԹԻՒՆԸ

Մի՛ դուք ձեր յոյս մի՛ աւանդէք օտարին,
Մի խոր վէրքեր ցուցընէք անգութին.
Արգահատանս լռսալք օգնութիւն.
Ձեզ կը ծաղրէ մերկութիւն։

Խ. Ն.

Այս ճշմարտութիւնն էր թաչում Ռափուրի ափերում ապրող հայ եպիսկոպոսի գրչի տակից։ Այս մեղեդին էր մրմնջում հայ օրիորդի և երիտասարդի շրթունքները. սակայն ամբոխը լսում էր այդ խօսքեր՝ զւարճանալու համար միայն։ Տարիներ պէտք էին, այո, երկար ու ձիգ տարիներ, ողջակէզի սեղանը պիտի ծանծուէր անթիւ եւ անհամար զոհերի դիակներով, որպէս զի համոզւել կարողանար անմիտ ամբոխը, թէ զուտ ճշմարտութիւնն այդ է։

Ոչ մեր ազգային պատմութեան ոսկետառ հատորների օրինակներն, ոչ ժամանակակից անցքերը չը կարողացան հային հասկացնել, թէ աշխարհում չը կայ մի ազգ որ Քրիստոսի սիրով տոչորւած ձեռք կարկառէ իւր եղբօրը, առանց ի հաշիւ ունենալու իւր սիրելի շահերը. ժամանակ պէտք էր, անթիւ և անհամար զոհողութ[illegible] որպէսզի պարզ կերպով նրանց սե[illegible]կան բերաններից լսէինք «գնա, հեռացի՛ր մեր դռնից, մեր շահը չէ թոյլ տալիս քեզ օգնել»։

Սրանք պատմութիւն չեն, անշունչ թղթերի կամ մագաղաթի խեշերանքի վրայ արձանագրւած, սրանք հաւաչներ են, որոնց արձագանքը շատ կուրծքեր է պատռել։

Հայեր, մեր տունը չը քանդեց [illegible] նամին. մեր տունը չը քանդեց [illegible] յեցւոց լէգէօնն և ոչ յունա[illegible] այլ նրանց քրիստոնեայ [illegible] տարամոլութիւնը։ Մ[illegible] վրայ վստահութիւն [illegible] տարի կատուն [illegible] համարում մեր [illegible] դուք չափազանց[illegible] [illegible]ածներս, բայց [illegible] փաստերով հա[illegible]

[illegible] խիստ շօշափելի [illegible] Ես վեր կառնեմ [illegible] քաթօլիկների և հա[illegible] [illegible]րը։ Հայոց երկսեռ դպրո[illegible] [illegible] ուսուցիչ եւ մի վարժուհի. [illegible]չներից մէկը աւարտել է Փա[illegible] [illegible] էքօլ-Նօռմալը, միւսը Թիֆլիզի սերս. հոգ. դպրոցը, մի երրորդը գոնըւել է էջմ. ճեմարանում, չորրորդը՝ Սանասարեանում *) վարժուհին աւարտել է Թիֆ. Գայանեան դպրոցը. իսկ հիմա դառնանք եւ մտնենք քաթօլիկների վարժարանը (եթէ ներելի լինի այսպէս ասել) այստեղ մեր աչքին երեւում է միայն մի խեղճ տիրացու, թէ ո՞ր կանոնաւոր դպրոցի երեսն է տեսել, մեզ համար գաղտնիք է։ Բայց այստեղ պիտի ցաւելով տեսնենք 130-ի չափ երկսեռ մանուկներ, մինչդեռ մեր փոքր ի շատէ կանոնաւոր դպրոցը եթէ սրա կէսն էլ ունենար, բախտաւոր կարող էինք համարել։ Ասացէք սա՝ հայի օտարամոլութեան ամենաէական փաստերից մինը չէ՞։ Խեղճ հայեր, սթափւեցէք ժամանակը ոսկի է. զուր մի կորցրէք. եթէ կամենում էք ձեր ինքնուրոյն կեանքով ապրել, թողէք օտարամոլութիւնը, կրթեցէ՛ք ձեր զաւակները մայրենի ոգով։

Մի՛ խաբւէք այդ քրիստոնէական մորթուց, նրա տակ ծածկւած են գայլեր. երբէք մի՛ մոռացէք, որ չորս օր առաջ ձեզ իրենց դուռը ցոյց տւեին ասելով «մեր շահը թոյլ չի տալիս ձեր աղեխարշ մրմունջը լսելու»։ Քրիստոնեայ եւրոպացու համար քրիստոնէական զգացում չը կայ, նա միայն ճանաչում է իւր շահը և դարձեալ շահը։

Ուրեմն մենք ապրենք մեզ համար լու ըմբռնենք բանաստեղծի հետեւեալ խօսքերը։

Տուր ձեռքդ եղբայր հերիք, համբերենք,
Հերիք ուրիշից օգնութիւն խնդրենք,
Մենք ենք տանջւողը մենք չարչարւողը,
Մենք պիտի լինենք մեզի փրկողը։

Օր. Ա. Ն. Օ.

1) վերջին երկուսի, երանից ասելով։

ԹԷՀՐԱՆԻ ՐԱՖՖԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Որտեղ հաստատւում է հայ գաղթականութիւնը, որքան էլ աննշան լինի նրա թիւը, այսու ամենայնիւ պէտք է զգում հիմնելու մի եկեղեցի, որովհետեւ այդ միակ շէնքն է համարում այն օղակը, որ կապում է ի[illegible] ազգայնութեան հսկայ շղթայի Երկրորդ ցանկութիւնն է լինում [illegible]

[illegible]

[illegible]դիք ելնող սե[illegible] մի այլ հ[illegible] [illegible]րն է ընթերցա[illegible] [illegible] վարժարանից [illegible] [illegible]խը ծանրացած է [illegible] [illegible]ետք է լոյս, ջեր[illegible] [illegible]ես զի ծլին և արգա[illegible] [illegible]սա այդ պէտքը լցնելու [illegible]մ է ընթերցարանին։ Այդ [illegible]տնում է ոչ միայն իւր ման[illegible] [illegible]ն ընկերներին, այլ և շատ [illegible]նօթներ, որոնք ձգտում են աւելի հաստատ հիմքերի վրայ դնել ընկերական կեանքի մեծ շէնքը։ Միմեանց հետ շփւելով, միմեանց հետ բաժանելով և փոխանակելով իրենց սեպահկան գաղափարները, երկար ու բարակ վիճաբանութիւններից յետոյ յաջողում է նրանց իւրացնել ճշմարիտ յառաջադիմութեան ոգին։

Հայկական այդ նշանաւոր ուղին էր գծւած և Թէհրանի հայ գաղթականութեան քայլերի առաջ, նա չէր կարող դուրս ելնել այդ ուղիից, նա չէր ցանկանում մոլորել իւր քայլերը։

Մենք չենք ուզում մանրամասնութեանց մէջ մտնել, միայն թռուցիկ հայեացքով նկատում ենք, որ հայ գաղթականութիւնը Թէհրանում՝ գոյութեան իրաւունք ստանալու օրիցն իսկ մտածեց եկեղեցու վարժարանի և ընթերցարանի վրայ ու ժամանակի տեւողութեան մէջ հետզհետէ բոլորն էլ ունեցաւ։

Բայց աճելով գաղթականութեան թիւը և ցրւելով քաղաքիս գրեթէ բոլոր անկիւնները մէկ մէկ եկեղեցին, վարժարանը և ընթերցարանը չը կարողացան այլ եւս նրանց պահանջներին գոհացումն տալ, թաղերի անհամեմատ հեռաւորութիւնը, ստիպեց իւրաքանչիւրից զոյգ զոյգ ունենալ։

Չորս տարի առաջ Դօվլէթի թաղի երիտասարդները կազմեցին մի ընկերութիւն, շնորհալի հայ բանաստեղծ Րաֆֆի անուան հովանու տակ, այդ ընկերութիւնը բաց արաւ մի համանուն ընթերցարան, խիստ համեստ ծրագրով։

Անցնում է ժամանակ, այդ ընկերութիւնը իւր առաջ գտնում է անակնկալ թշնամիների մի փնջակ, որ սկսում է անատամ չարութիւններ ստեղծելով այդ ընկերութեան վարկը ձգել ժողովրդի մէջ։ Սկսում են այդ ընկերութիւնը կուսակցութեան ծնունդ հռչակել և իւրաքանչիւր անդամին Րաֆֆիական անունով մկրտել։ Դրանց չարութիւնն մինչև այնտեղ հասաւ, որ սկսեցին կառավարութեան առաջ մատնել, թէ այդ ընկերութիւնը յեղափոխական մի ընկերութիւն է և այլն և այլն. ի հարկէ այս բոլորը ծառայեցին միայն այդ ընկերութեան փայլը արծարծելու։ Մինչև այսօր էլ մարդիկներ կան, որ Դօվլէթի թաղի Ուսումնասիրաց ընկերութեան արժարանը անւանումեն Րաֆֆիական վարժարան, մինչդեռ Րաֆֆի ընկերութեան ամբողջ տարուայ հասոյթը հազիւ բաւականանայ այդ վարժարանի միայն 2 ամսուայ ներքին ծախքին։

Բայց տեսնենք, արդեօք, ինչ է պատճառը, որ մարդիկ այդքան նշանակութիւն են տալիս այդ ընկերութեան և այդքան ջանք են գործ դնում նրան [illegible]ն կերպով վնասելու կամ եթէ ձեռնե[illegible] [illegible]այ, մինչև անգամ տապալելու։ [illegible]չէ մեզ, Պարսկաստանի հայերիս [illegible] թուի եթէ [illegible]ւմ են [illegible] կերպով [illegible]որ, մի [illegible]ն մենք Րաֆֆի ենք ա[illegible] [illegible]չ, պարսկահայը բարի է և երախտագէտ, նա չէ կարող մտածել, որ աշխարհում գոյութիւն ունեն այդպիսի արարածներ։ Բայց ցաւում ենք ասել, որ հեռու Կովկասում ապրում են տնհատներ. որ մինչև անգամ չը բաւականանալով հանգուցեալի կենդանութեան ժամանակ նրա դէմ հնարած ամեն տեսակ չարիքներով, գերեզմանից եւս սկսեցին դուրս քաշել նրա ոսկրները և կրծել, նրանք եւս փոեցին, դրանցից էլ պէտք էր ձեռք վերցնել, այժմ իրենց զէնքերը դարձրել են նրա անպաշտպան որբերի և այրի դէմ։ Կարող էք առանց սոսկալու երեւակայել, որ կան հայեր, այն էլ իրենց ազգասէր տիտղոսով մկրտած, որ աշխատում են խլել այն չոր հացի կտորը, որ բարի ձեռքեր կարկառում են այդ դժբաղդ որբերին։ Իսկ այս ամենը իմանալուց յետոյ կարծեմ տեղիք չը կայ զարմանալու թէ այդ մարդատեսակ արարածների արբանեակները Թէհրանում ինչու են թշնամաբար վերաբերւում դէպի այդ անմեղ Րաֆֆի ընկերութիւնը։ Դոքա թշնամի են ոչ թէ այդ ընկերութեան, ո՛չ, ոչ, այլ նոյն իսկ իրեն Րաֆֆիին, նրա յիշատակին, ընտանիքին...

Ինչո՞ւ.... Ա՜խ, այդ ինչուի տակ շատ գաղտնիքներ կան ծածկւած. թողնենք առ այժմ այդ ինչուն։

Վաղարշակ Բժշկեանց.

ԹԱՓԱՌԱԿԱՆ ԴԻՐՎԻՇՆԵՐ

Ծուլութիւնն սաճմ, մեղկութիւնը, թէ անհոգութիւնը, թոյլ են տալիս մարդատիպ արարածների, կիսամերկ, բոբիկ ոտներով, բաց գլխով թափառել քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, դռնից դուռ, հաց խնդրել, դրամ կորզել աշխատասէրի դրպանից, գոցա փող շահելու ամբողջ դրամագլուխը կազմում է գեղեցիկ խօսքերի մի շարք, որ չեմ գիտէր ինչպէս են ժամանակ գտել գոց անելու հաֆըզից կամ Սադիից որ զարհուրելի ճիչերով արտասանում են իւրաքանչիւր դռան հասնելուն պէս։

Դու սկզբում երբ լսում ես այդքան գեղեցիկ խօսքեր այդպիսի անշնորք դիպերի բերնից մնում ես շուարած, բայց դրանք քեզ երկար չեն թողնում այդ վիճակում, երբ վերջացնում են գոց արած ֆրազները, առ ժամանակ մի լռում է և նոցա տարօրինակ ճիչը, ապա անձնատուր լինելով իւրեանց սեպհական գիտութեան սկսում են ծիծաղդ շարժել իւրեանց խեղճ ու կրակ փիլիսոփայութիւններով։

Շատ ժամանակ չը կայ ես պատահեցայ այդ դիպերից մէկին, այն ժամանակ երբ իւր գեղեցիկ ֆրազների

տոպրակը դատարկած օգուտ էր քաղում իւր սեպհական իդիալից, ճնշող տպաւորութիւն գործեց իմ վրայ, նրա բերանից լսածս հետեւեալ վարդապետութիւնը, «եթէ մէկը չարչարէ իրենից փոքրին, դա այնքան մեծ յանցանք չէ բայց եթէ յանդգնի իրենից աւելի բարձրի սիրտը վշտացնել՝ դա է ամենամեծ մեղքը»։ Ես մխիթարուած էի նրանով, որ 1896 թուականումն ենք լսում այդ փիլիսոփայութիւնը, որին կարող է հետեւել միայն առողջ մտքերի ծիծաղը. այն թուականը, որ քարոզում է հաւասարութիւն, պահանջում է յարգանքը վերապահել միայն արժանաւորին, չէ կարող այդ տեսակ քարոզիչների մտքի վիճակի վրայ չը ցաւել։

Այդպիսիներից միայն պէտք է խնդրել որ եթէ չեն կարող գրդել ոգին, գէթ բարեհաճեն գոց անել պարսից մեծ բանաստեղծի այն հիանալի խօսքերը, որ ասում է։

Հրաժարուիր չարչարելուց, մինչև
անգամ այն որդին,
Որսողում է ոտքիդ տակ.
Քանզի նա էլ մի կեանք ունի և իւր
կեանքով այդ չնչին,
Հրճւելու է ընդունակ։

Հրանդ.

ՆԱՄԱԿՆԵՐ ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻՑ

---

10 յուն. 96

Յարգելի պարոններ

Ահա, մօտաւորապէս 10 ամիս է, որ մեր թեմական առաջնորդ Եսայի եպիսկոպոսը թողնելով Ջուղան դէպի Հնդկաստան ճանապարհորդեց։ Ամենքդ լաւ գիտէք թէ Հնդկաստան ինչու մագնիսի պէս դեպի իրան է քաշում մեր հոգեւորականներին։ Մեզ միայն ասացին թէ Ն. Սրբազնութիւնը գնում է յայցելութիւն հասարակածի տակ սփռուած իւր հօտին. նրան հոգեպէս մխիթարելու համար։ Մենք քաջ գիտենք որ Հնդկաստանի հայը ոչ հոգեպէս և ոչ էլ մարմնապէս մխիթարուելու պէտք ունի, մխիթարութիւն ակնկալում է միայն այն թշուառ ժողովուրդը, ազգայնութեան այն մասն որ գործ ունի եղների և գութանի հետ, և որին մենք հասարակ լեզուով գեղացի ենք ասում։ Բայց ի՞նչ, թշուառ գիւղացին ունի՞ այն մագնիսային զօրութիւնը որ քաշէ բերէ առ ինքը աշխարհային վայելչութեանց և հրապոյրից վաղուց հրաժեշտ տուած կուսակրօն հայրերին։ Դու տանջուիր այդ հողի մէջ, չարչարուիր՝ որքան կուզես, խեղճ գիւղացի, քեզ մտիկ անող չըկայ, քանի որ դու չես ներկայացնում դեղին ոսկի. քո հոգեւոր հովիւներից մինը Հնդկաստանն է սիրում, նրա տեղապահը Թէհրանն, Ջուղայի վանքը մնացել է լքուած, թափուր. գեղերից եկած բողոքները դիզուած են վանքում, գաւառային բոլոր գործերը մնացելեն երեսի վրայ, իսկ մեր առաջնորդը հասարակածի տակ քարոզում է «գանձեցէք գանձս յերկինս» իսկ նրա տեղապահը Պարսկաստանի մայրաքաղաքում ձեռք առած մի վարժարան այսօր քանդում է վաղը նորոգում որպէս զի մեծ բանի մէջ երևնայ։ Այս ցաւալի կացութեան վրայ ոչ-ոք չէ մտածում. մեր յուսոյ աչքերը դարձրած դէպի Աբրահամեան աթոռը սպասումենք օգնութեան. բայց կարծես նա էլ է մնում անկարեկից։ Ջուղայի վանքը առանց առաջնորդի՞ կամ գէթ տեղապահի չէ կարող մնալ, յոյս ունենք, որ ազգիս ամենասելի Հայրապետը կը մատի շուտով մի դարման այդ վանքի անկերպարան վիճակի համար։

Ջուղայեցի.

---

13 յուն. 96.

Հրճուալից սրտիւ պատիւ ունիմ շնորհաւորել Աստղ-Արևելեան ձեր նոր լրագրի հրատարակութիւն՝ որոյ առաջին համարն Մասեաց աւետաբեր աղաւնոյ նման իւր թղթաթերթիկ թեւերով մաւառնելով շնորհաւորեց և մեզ փրկչական տարւոյ Նոր-կաղանդն, լիայոյս խնդութիւն ազդելով իւր ծննդեանն բաղձացող և զինքն ողջագուրող սրբոտերին։

Աստղ-Արևելեանի նորափայլ ծագումն ու ցոլումն պարսկահայոց երկնակամարի վրայ՝ մի յառաջադիմական բարեգուշակ տպագայ է աւետելու երկրիս հայ ազգայնութեանն, քանի որ նորա դեռափթիթ զաւակց մտաւորական ու գաղափարական սթափման ուղին հարթ ու հաւասար գործելու վսեմ պաշտօնն ու պատասխանատուութիւնն ունի իւր վերայ ստանձնած. ահա՛ մի գեղեցիկ դրաւական։

Թէ ո՞վ յղացաւ այդ լրագրի գոյութիւնն ու անունն արդէն քաջածանօթ է, այդ անուն ոչ թէ ինն ամսեայ, այլ թերևս բազմամեայ յղացման բարոյական սաղմն եղաւ այն վսեմ ու քանքարաւոր ուղեղին որ այժմ նոր ի նորոյ ծնունդ է առնում Ջաւահայ նորահարս մամլոյ երկնող ճռնչող անիւներից և իւր նորածին թերթեր իբրև անուշաբոյր վարդ ու ծաղկանց փնջեր ընծայում է բաժանորդներին։

Իրանի հայ հպատակաց արեգակնափայլ Վեհապետի պանծալի անուանն ու գթած սրտին էր միայն արժանի որ պարսկահայ գրեթէ որդիացեալ ժողովուրդն նորին օրհնեալ գահակալութեան ոսկեղէն շրջանում ունենար բարձրագոյն շնորհիւ արտօնեալ լրաթերթն, հայ հպատակաց բարորաւէտ կենաց, սրտի ու մտաց թարգմանն լինելու, յօգուտ հասարակական մտաւոր զարգացման։

Գ. Զոհրապեանց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթաթերթի 2-րդ թիով դիտողութիւն արինք հասանարաղ թաղի Ամերիկացոց վարժարանում տրուելիք երեկոյթի մասին եւ խնդրեցինք, որ եթէ կարելի է զգուշանան հասարակութիւնը ծանծրացնող անհամ եւ անտեղի պատմութիւններ կարդալուց. մանաւանդ դեռ մեր հայկական կեանքը այնքան չի սնանկացել որ մենք պէտք զգանք երեկոյթներում խօսելու նիւթ վեր առնել մի միայն արաբներից։ Այսպէս թէ այնպէս միւս օր ծրագիրը դուրս է գալիս եւ նրանից իմանում ենք որ կը կին «Ամի կալուցուի «արաբների պատմութիւնը». ի հարկէ մինչ ցաւեցանք, սակայն երկու օրից վերջ նկատեցինք որ «արաբների պատմութեան» վրայ մի գիծ է քաշուած, վերջը իմացանք որ երեկոյթը կազմակերպող մասնախումբը տեղի տալով լրագրութեան անկեղծ եւ արդար ձայնին վերցրել է այդ կտորը ծրագրի միջից. նոյնն էլ նկատեցինք երեկոյթի ժամանակ։ Թէ որքան ազնիւ քայլ է առնում դրանով մասնախումբը բարձր է ամեն զովասանքից իսկ մենք, պարոններ, ձեր այդ հաստաքաշխութեան համար. այսքանը միայն կարող ենք ասել, շնորհակալ ենք.

Ամսիս 19-ի ուրբաթ գիշերն հասանաղատ թաղի Ամերիկացոց եկեղեցում կայացաւ գրական եւ երաժշտական մի երեկոյթ. ընդհանուր առմամբ երեկոյթը լաւ էր, բայց ինչ որ պակասեցրեց հասարակութեան դա անզգիացի մի տիկնոջ ելմ բարձրանալն եւ հայերէն «ծիծեռնակ» երգը հայկական մի արտասանութեամբ երգելն էր որն բուռն կերպով ծափահարուեց. լաւ էին նաեւ միւս գրական եւ երաժշտական կտորներն։ Իսկ զալով այդ երեկոյթի արդիւնքին թէեւ ճիշտ չենք գիտեր որքան է եղել, բայց յոյս ունինք որ գործող մասնախումբը նրան շուտով հրատարակութեան կտայ եւ կը յայտնէ թէ ինչ է իւր վերջնական դիտաւորութիւնն այդ փողի համար։

Լսում ենք, որ Այվատեան հայրը իւր սիրած մարդերն է մտցրել հայկազնեան վարժարանի հոգաբարձութեան կազմի մէջ. մարդեր, որոնց անուններն անգամ չէ յիշուել ընդհանուր ընտրութեան ժամանակ։ Ճախարակը դառնում է և լետ է տալի հին կծիկը. բայց կարծումենք որ ժողովուրդը թոյլ չի տալ մարդկանց, որ խաղան իւր զգացումների հետ։

Թէհրանի Ընթերցասիրաց ընկերութեան գրադարանի օգտին տրուած հանդիսից գոյացած գումարը, որ ամեն օր տոկոս տալով պակսում է՝ լսում ենք, որ վերջնականապէս վճռուել է յատկացնել մի այլ ազգային հաստատութեան ոչ ընթերցարանին, որովհետև վերջի բայց նա ոչ ազգային է և ոչ բարենպատակ։ Մենք չենք ցանկանում իմանալ թէ մարդիկ այս տարօրինակ երևոյթին ինչ անուն կը տան. մենք համոզուած ենք միայն, որ սա՝ ոչ սկզբունքի բընաբարումն է և ոչ կիրք, այլ մի պարզ աւազակութիւն։

Ջուղայեցի ազնիւ և պատուաւոր մի անձ Գ. Գօղոս Կ. Գօղոսեան՝ որ երկարտարիներ Ջաւայում է եղել և հիմա Ջուղայ է վերադարձել՝ իւր ծախքով և իւր անունով մի վարժարան է բացել 2հարմհալ գաւառի Լիվասան գիւղում և ահա 3 ամիս է որ այդ վարժարանը կանոնաւորապէս շարունակում է. այս ազգասիրական ձեռնարկը իրաւապէս մեծ գովեստի արժանի է։ Հարուստներ շատ ունինք, բայց երանի այն հարուստներին որ հոգով էլ հարուստ են, ոչ թէ միայն և միայն փողով։

---

22 տարեկան մի երիտասարդ օրերըս անձնասպանութեան փորձ է արել. թունաւորելով իրեն մկնդեղով. բժշկական օգնութիւնը շուտ հասնելով ազատուում է։ Շարժառիթը՝ (ինչպէս լսում ենք) եղել է ընտանեկան անհամաձայնութիւնը։

Լսում ենք, որ հայկազնեան դպրոցի պարոն տեսուչը մէկ ամիս է չէ երևցել նոյն վարժարանում։ Ասում են գործերի շատութիւնն է պատճառը ազօթում. ենք որ այդպէս լինի։

Հայկազեան դպրոցում, օրիորդների կրթութեան գործը յանձնուել է մի քանի տիրացուների, այն կորսաարեր մանկավարժական սիստեմի հիման վրայ թէ, փոքր են դեռ, այլ-ոչն են կարդում և թէ ամեն հասնող կարող է այդ դասը վերցնել, բայց չեն գիտեր, որ շէնքի կամարները կանգնած են սիւների վրայ հետևապէս սիւները պէտք է ամրապնդել։

Այս սխալ քայլը սոխալել է օրիորդների ծնողներին, հանել տանել իրենց օրիորդներին։ Հոգաբարձութեան գէթ լուրջ մասի ուշադրութիւնն ենք հրաւիրում։

Այս կիրակի եւ Հայր Այվատեան քարոզ խօսեց, թէև աւետարանի բացատրութիւնից սակայն կարճ և մի ոգեւորուած վերջաբանով աւարտեց, որի նիւթն էր «արդարութիւնը զոհ է պահանջում»։

Քաղաքիս դերձակները մի ընկերութիւն են կազմել, որի նպատակը պիտի լինի օգնել իրենց անկար արհեստակիցներին նեղութեան ժամանակ. այդքան ազնիւ մի ձեռնարկ չէ կարող մեր կողմից ուրախութեամբ չընդունուել, երանի՞ թէ դա՝ օրինակ դառնար և մեր միւս արհեստաւորներին։

Լսում ենք, որ Հ. Այվատեանն արգիլել է հին սովորութեան համաձայն զուռնայով, ահագին բազմութեամբ և խլացուցիչ հարայհրոցով հարս տանելը։ Նոր կանոնի համաձայն հարսը մի քանի բարեկամ կանանց հետ պիտի գնա եկեղեցի, նոյնպէս և փեսան. այնտեղ պսակի արարողութիւնը կատարել տալուց յետոյ պէտք է դառնան փեսայի տունը։ Ցանկալի կը լինէր որ այս գեղեցիկ սովորութիւնը յարատևէր։

Լուր է պտտում որ վերջերս Թումանեանցների գրասենեակը և Հաճի Մ. Համամէտ ալաղրպէնտի խանութը մտնողները գտնուել են և ասում է թէ դրանք 8. հոգի զինուորներ են եղել։

Թւով մօտ 8 երիտասարդներ, իրենց թոյլ էին տուել ամսիս 20-ի երեկոն հարբել և բաց կառքերի մէջ նստելով թմբուկներով և շեքէստէ երգելով փողոցները չափչըփել. այն տարօրինակ քէֆի լուրը բարձր շրջաններն է հասել և ամբողջ հայ գաղթականութեան պատիւը արատաւորել. մենք կը խնդրենք որ այդ վայրենի և անասնային քէֆերից ձեռք վեր առնեն. գէթ խնայեն հայութեան պատուին։

Նոյն երեկոյ այդպիսի մի քէֆ էլ տեղի է ունեցել մի տան մէջ. ինչպէս լսում ենք այդ քէֆն էլ խիստ անասնական է եղել։ Ամօթ է վերջապէս։ Ներկայ ժամանակս, որ հայը ոչ եւ գիշեր ճգնում է խիստ բարձր մի ոլորք ձեռք բերել ընկերական շրջանի մէջ Թէհրանի երիտասարդութիւնը այդպիսի անհամ եւ կոպիտ զուարճութեանց մէջ հոգւոյ ընկերանք փնտռել։

Թիֆլիսից մեզ գրում են որ վերջին հեղեղների պատճառաւ երկաթուղաւրուած մասերը այժմ նորոգել են և Պաթումի և Թիֆլիսի մէջ երկաթուղային ուղիղ յարաբերութիւնները սկսել են։

Ն. Ջուղայից մեզ գրուած մի նամակից քաղում ենք հետեւեալը։ «Ամսիս 6-ի Ջրօրհնէաց գիշերը տեղիս հոլանտացի մի վաճառականի տնում 2 պարսիկներ որք ամեն գիշեր աֆիոնի վրայ պիտի հաքէին՝ ներս կմտնեն մի փոքրիկ սենեակի մէջ որն ոչ մի կողմից օդ խաղալու տեղ չի ունեցել. դուռը լաւ կը կողպեն և բաւական էլ ածուխ կրակ. տելով կփակուեն կը մնան այնտեղ առաւօտը կը յայտնուի որ մեռել են. լուր կ'տրուի նրանց ազգականներին որք կգան մեծ վայնասունով և կ'գատապարտեն եւրոպացիներին թէ իրենք կամաւ սպաննել են նրանց. հետզհետէ ամբոխը կը խռնուի տան շուրջը և կոպտանայ տան վրայ յարձակել։ Անգլիացոց հիւպատոսը երբ լուր կառնէ անմիջապէս եղելութիւնը կյայտնէ Ն. Ս. Բ. Զէլլը-Սուլթանին, որ շուտով մի քանի աստիճանաւորներ կը ղրկէ Ջուղա հոնգերձ, մի խումբ զօրքով, միեւնոյն ժամանակ իւր անձնական բժիշկն երեք եւրոպացի բժիշկների հետ միասին դիակների վրայ մի քննութիւն կատարելով կը հաստատեն թէ ածուխի մէջ եղած ածխածին կազն է նրանց խեղդել. բայց ամբոխը չէր ուզում ընդունել, վերջապէս կորոշեն որ 2 դիակները քաղաք տանեն մեծ մուշտէհէտների մօտ և նրանցից հրաման առնելով վերադառնան Ջուղան թալանելու և քրիստոնեաներին ջարդելու, իսկ այդ միջոցում հայ թէ եւրոպացի ամենքն էլ իրենց տներում ամրացած դուրս չէին գալիս։ Ամենափրկչեան վանքի Սինօդը անմիջապէս կ'գրէ մուշտէհէտներին և կ'խնդրէ որ պաշտպանեն հայերին, նրանք էլ ժողովրդին իրաւունք չեն տար խառնակութիւններ անելու և կ'պատուիրեն որ տանեն մեռեալները թաղեն։ Վերջապէս Իսֆահանի ամբողջ խանութները քանի օր կապելուց և շփոթութիւն անելուց յետոյ երբ կտեսնեն թէ Արքայորդին Ն. Կ. Վ, Արեգակնափայլ Շահի հեռագրական հրամանով պատրաստւում է զօրքով և թնդանօթներով պաշարել Ջուղան և պաշտպանել քրիստոնեաներին՝ ամեն կողմից անյոյս սկսում են ցրուել ու հանդարտել և մեռեալները 7 օր պահելուց յետոյ պարտաւորեցան թաղել»։ 1)

Այս դէպքում դարձեալ երեւան է գալիս այն բարձր սէրն ու համակրանքը որ մեր սիրելի վեհապետն ունի դէպի իւր հայ հպատակները, նաև այն կատարեալ համերաշխութիւնը որ տիրում է հայ և պարսիկ հոգեւորականութեան մէջ։ Ամեն դէպքում այս դէպքն էլ նոր մի առիթ է տալիս պարսկահայերին աղօթել իւր սիրելի Շահի կենաց երկարութեան և նրա լուսամիտ կառավարութեան անխախտ պահպանման համար։

Քաֆֆի ընկերութիւնը՝ չհայելով որ իւր կանոնագրի համեմատ տարեգլխին ընդհանուր ժողով պէտք է գումարէր և նոր ընտրութիւն անէր՝ դեռ լուռ է մնացել. այդ մասին տնօրինութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում։

1) Ինչպէս լսում ենք հոլանդացի վաճառականները բաւականաչափ մի գումար էլ տուել են մեռածների ընտանիքին:

Ծ. Խ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի թերթերից արտատպում ենք հետեւեալները։

Մեր ստացած մի տպագրուած յայտարարութիւնից երեւում է որ Թէհրանում (Պարսկաստան) առաջիկայ 1896 թուին պիտի հրատարակւի մի շաբաթաթերթ «Աստղ-Արեւելեան» անունով խմբագրական մասնաւոր մի ժողովի խմբագրութեամբ։ Շաբաթաթերթի արտօնատէրն է պ. Մակար Կ. Մակարեան։ Ծրագիրն կազմուած է բաւական համեստ և եթէ խմբագրութիւնը կարողանայ այդ սահմաններում կատարել իւր խոստումը, այդ օրգանը կարող է օգտակար լինել, եթէ միայն չընթանայ «Շաւիղ» անուանուած՝ թերթի շաւղով։ Ռուսաստանի համար տպագայ շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինն է 3 ռուբլի. հասցէն՝ *Téhéran, Perse. Rédaction du journal arménien Astgh Arevélian.*

Արձագանք. № 150

Մենք ստացանք Թէհրանում տպված մի յայտարարութիւն, որից երեւում է, որ մի պարոն, Մակար Մակարեան անունով։ մտադիր է առաջիկայ յունվարից հրատարակել Թէհրանում մի նոր շաբաթաթերթ «Աստղ-Արեւելեան» անունով։ Յայտարարութիւնն այդ նոր թերթի հրատարակութիւնը բացատրում է նրանով, որ Պարսկաստանի մէջ չը կայ մի լուրջ, շարեխիղճ և ազգի շահերին նուիրուած լրագիր, ուստի «Աստղ Արեւելեան» թերթը հրատարակվում է, որպէս զի նա պաշտպանի ճշմարտութիւնը և հասարակական ընդհանուր շահերը։ Ի հարկէ, մօտիկ ապագան ցոյց կը տայ թէ «Աստղ-Արեւելեան» փքուն վերնագրով թերթը որքան լուրջ և բարեխիղճ օրգան կը հանդիսանայ. բայց չենք կարող մեր վրդովմունքը չը յայտնել այն տգեղ և եթէ կամենաք «հայկական» սովորութեան մասին, որից ինչպէս երեւում է, ազատ չէ և Մակար Մակարեանը։ Հայը, երբ մի բանի ձեռնարկի, անպատճառ կը սկսի նրանից, որ կը պախարակի արդէն գոյութիւն ունեցող նոյնանման գործերը, փառաբանելով այն, որ ինքը պէտք է անի։ Նոյն իսկ տարրական համեստութեան դէմ են այդ ինքնագովութիւնը և փքուն խոստումները։

Մշակ. № 149

Մենք ստացել ենք մի յայտարարութիւն, որից իմանում ենք, որ առաջիկայ 1896 թուականից Թէհրանում հայերէն մի նոր շաբաթաթերթ պիտի հրատարակւի Աստղ-Արեւելեան անունով խմբագրական մի մասնաւոր ժողովի խմբագրութեամբ։ Յայտարարութեան մէջ ասուած է։

«Քանի որ լուրջ և Ազգի շահերին միայն նուիրուած մի լրագրի պէտքն անչափ զգալի է Թէհրանի մէջ՝ արձագանք տալու համար ամբողջ Պարսկահայ գաղթականութեան այն բազմատեսակ կենսական խնդիրներին, որոնք առ ի չգոյէ լուրջ, կարեկից և բարեխիղճ մի թերթի մեռած կամ անլուծելի մի վիճակի մէջ են մնում, Ընկերութիւնս ձեռնարկեց «Աստղ-Արեւելեանի» հրատարակութեան, պաշտպան կանգնելու համար ճշմարտութեան և հասարակական ընդհանուր շահերին։

Ազգային անուան տակ վարագուրուած և անձնական գծուծ հաշիւներ քրքրող յօդուածներ երբեք չպիտի մտնեն մեր լրագրի էջերն։ «Բարին գեղեցիկը և ճշմարիտը» գովել և պաշտպան կանգնել նրանց, ահա մեր բնաբանն»։

Ցանկալով, որ խմբագրութիւնը միշտ յիշէ իրեն նշանաբան գրած այդ խօսքերը՝ մենք ուրախութեամբ ողջունում ենք «Արեւելեան Աստղի» երեւան գալը Պարսկաստանի խաւար հորիզոնի վրայ. Թերեւս շատերին յայտնի չէ, որ Թէհրանում ահա մի քանի տարի է հրատարակւում է «Շաւիղ» անունով մի ինչ որ թերթ, բայց այդ թերթը հրատարակւում է կարծես թէ միմիայն նրա համար, որ ով իւր կեղտոտ լուածքը չի կարող լուանալ Թիֆլիսում հրատարակւող մի հայ լրագրի մէջ, ուղարկի Թէհրան «Շաւիղ» կոչուած թերթի մէջ լուանալու համար։ Պարսկաստանի խաւար ժողովրդի մէջ «Շաւիղի» տարածած ապականութեան դէմ մի հակակշիռ կազմող թերթի գոյութիւնն անհրաժեշտ էր, որպիսին ցանկալի էր, որ լինէր «Աստղ-Արեւելեանը»։

«Աստղ-Արեւելեանի» արտօնատէրն է Մակար Կ. Մակարեան։ Բաժանորդագինը Ռուսիայի համար տարեկան 3 ռուբլի է, կէս տարուանը 2 ր., օտար երկրների համար տար. 8 Ֆրանք, վեց ամսուանը 5 ֆ.։ Հասցէն՝ Téhèran, (Perse.) Rèdaction du journal armènien Astgh-Arèvelian.

Նոր-Դար. № 222

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Քահիրէ. 30 յուն. Խարթումի ապստամբութեան մասին, ոչինչ լուր չի հասել այստեղ բայց միայն տարածայնութիւն կայ թէ խարթում հարաւային կողմում զանազան ցեղեր ապստամբելեն միայն խալիֆաի դէմ: Վերջին լուրերը հաստատումեն թէ Մաքալայի զօրքն ապահովութեամբ հասաւ Աղագամուս իտալական բանակը:

Լոնդոն 30. յուն. Պ. Քրուգէր՝ նախագահը յայտարարելէ թէ ինքը շատ պատճառներ ունի հաւատալու, որ շատ քոմփանիներ մտադիրեն հանքային գործերը դադարեցնելու, որը նա ասումէ թէ նշանակումէ խռովութիւնները նորոգել: Նախագահը ասումէ, թէ Թրանսվալի կառավարութիւնը վճռելէ խստիւ պաշտպանել հանքային գործերը եւ սաստիկ պատժել այն անձնաւորութիւններին,որ կփորձեն խռովել նորա խաղաղ ծաւալը:

ԱՅԼՔ ԵՒ ԱՅԼՔ

Յայտնի համալսարանական մի գիտնականի փորձով ապացուցւեց, որ վըտանգից ազատուելու համար մարմնամարզութիւնը ամենաանհրաժեշտ գիտութիւնն է. նրա շնորհիւ կարելի է մինչեւ 5 արշին բարձրութիւնից թըռիչներ գործել:

«Թռչինք, թռչինք, այո՛ թշուառ բարոյատէր, թռչինք, բայց ոչ կըտուրներից փողոց:

Հռետորը բարձրանում է բեմ: Պարոններ, «ասում է» ինձ խորհուրդ չեն տալիս, որ այս երկար ձեզ ձանձրացնեմ իմ.... պատմութիւնով, ես էլ հնազանդում եմ: (ծափահարութիւն).

Ինչպէս մինչեւ այսօր ոչ մի հռետորի արտասանած ճարտասանութիւնը այդքան արժանապէս չէ ծափահարուել իսկ ժողովուրդը երբ ծափահարումէ նրա համար որ իրեն չեն համարձակւում ձանձրացնել, նշանակումէ նրանում գոյութիւն ունի հասարակական կարծիքը:

ԴՐԱՄԻ ԱՐԺԷՔ

Անգլ. լիրա.	
Հին ռուսաց ոսկի	41 ղ. 75
Նոր ,, ,,	40 ղ. 65
Հոլանտական ,,	
Պարսից թումանի ոսկի	18 ղ. 90
,, 5 ղռանանոց ,,	9 ղ. 75
,, 2 կէս ղռանանոց ոսկի	
Տաճկաց ոսկի	48 ղ. 40
Ռուսաց րուբլի	5 ղ. 50

Փոխանակագրերի արժէքներ

Լոնդոնի վերայ 3 ամսով թուականից, 1 լիրա 51 ղ. 75 սանթ.

Տաճկական լիրա Պոլսոյ վրայ ի տես 47 ղ. 75 սանթ.

Ռուսական ռուբլին Ռուսիոյ վրայ 184 կոպէկն 10 ղռան, կամ 5 ղ. 9 շ. 1 րուբլի,

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
Աստղ-Արեւելեան Ընկերութիւն
ԱՐՏՕՆԱՏԷՐ
Մակար Կ. Մակարեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռ. ընկերութեան մասնաժողովն պատիւ ունի յայտարարելու արգոյ հասարակութեան թէ 'ի նպաստ Հայկական վարժարանին շրջաբերութեան հանած վիճակահանութիւնն պիտի քաշուի վերջնականապէս ներկայ Յուն 28 ին (հին տոմար) նոյն վարժարանի սրահումն կէսօրից 2 ժամ անցած։

Փափագողք կարող են դիմել Թէհրանում Պ. Ղուկաս Բաբաղեանին մնացեալ տոմսակներից գնելու համար:

Տոմսակի գինն՝ 5 ղռան
Շահող թիւերն՝ 3 են
1 թիւ 500 ղռան
1 ,, 300 ,,
1 ,, 200 ,,

LIBRAIRIE BARNEOUD
Teheran

Մ. Բառնէօսն՝ գրավաճառ Թէհրանում, պատիւ ունի յայտնելու թէ իւր գրավաճառանոցում գտնւում են ամեն հասակի եւ ճաշակի յարմար գրքեր ամեն լեզվով գլխաւորապէս գաղղիերէն. վայելչագրութեան տետրակներ եւ այլն:

Արժէքներն շատ աժան են եւ ամենքին մատչելի. դիմել վերոյիշեալ գաղղիերէն հասցէին:

10 —3.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Թարգմանեց պարսկերէնից
ՄԻՔԱՅԷԼ Ա. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Ա. ՀԱՏՈՐ
Գինն է 1 եւ կէս ղռան.
Դիմել խմբագրութեան.
2—5

Ջաւա-Հայ Տպարան